

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր



لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Արցախի Հանրապետության Ամերիկյան ճանաչումներ



Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստան.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	4
4- Սփյուռք.....	7
5- Միջազգային.....	8
6- Մշակութային.....	10
7- Գծանկարչություն.....	12
8- Առաձանի.....	12

Պարսկերեն բաժին

Հայ գրականություն և մշակույթ.....1-4

Ճապիկի առաջին էջում՝ Արցախի անկախության
Ամերիկյան ճանաչումներ
Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրերը

Համար 209, Մարտ 2016
No. 209, March 2016

ماهنامه لویس - شماره ۲۰۹ فروردین ماه ۱۳۹۵

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան

Փոստարկը 15875-9488 Թեիրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**
POBox 15875-9488 Tehran – Iran
E-mail : louys_monthly@yahoo.com
Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

ԼՂՀ անկախության հռչակագիր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Հ Ո Ջ Ա Կ Ա Գ Ի Ր

ԲՈՒՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՊԼՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՊԼՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման և նրա
պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր
մարմինների ձևավորման վերաբերյալ հռչակագիր
ընդունելու մասին:

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների
մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների
Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային
խորհուրդների համատեղ նստաշրջանը, արտահայտելով
ժողովրդի կամքը, որը ամրագրված է փաստորեն
անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի
շրջանային իշխանության մարմինների 1988-1991 թթ.
որոշումներում, ազատության, անկախության,
իրավահավասարության և բարիդրացիության նրա
ձգտումը, ղեկավարվելով քաղաքական, սոցիալ-տնտեսական
և մշակութային ոլորտների զարգացման խնդրում ամբողջ
բնակչության շահերով, բնական և օրինական, միջազգային
իրավունքի նորմերին համապատասխան համարելով հայ
ժողովրդի միասնության ձգտումը, որոշում է՝

1. Ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար
Մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման
մասին հռչակագիրը:

2. ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային
խորհուրդը և նրա գործադիր կոմիտեն համարել Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության և
կառավարման բարձրագույն ժամանակավոր մարմին՝ մինչև
համաժողովրդական ընտրություններ, իշխանության և
կառավարման հանրապետական նոր մարմինների
ձևավորումը:

3. Հանձնարարել ժողովրդական պատգամավորների
մարզային խորհրդի գործկոմին՝ ներգրավելով լայն
հասարակությանը, նախապատրաստել և մարզային
խորհրդի նստաշրջանի քննարկման ներկայացնել ԼՂՀ
պետական իշխանության և կառավարման մարմինների
կառուցվածքի և գործառնությունների մասին ժամանակավոր
կանոնակարգը:

4. Մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում
գործում են ԽՍՀՄ սահմանադրությունը և
օրենսդրությունը, ինչպես նաև այժմ գործող այլ օրենքներ,
որոնք չեն հակասում սույն հռչակագրի նպատակներին ու
սկզբունքներին, հանրապետության
առանձնահատկություններին:

2 սեպտեմբերի 1991թ.

Հայաստանի Հանրապետություն

ԱՄՆ Ջորջիա նահանգն ընդունել է ԼԳՀ-ն ճանաչող բանաձև

03.03.2016



ԱՄՆ Ջորջիա նահանգի օրենսդիր մարմինն այսօր՝ մարտի 3-ին ընդունել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչող բանաձև, այդ մասին հաղորդում է ԱՄՆ Հայ դատի գրասենյակը (ANCA):

Ջորջիայի Ներկայացուցիչների պալատը ընդունել է H.R. 1580 բանաձևը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման մասին: ANCA-ի փոխանցմամբ, Բանաձևի ընդունմանը հատուկ աջակցություն են հայտնել պալատի անդամներ, դեմոկրատներ Փաթ Գարդներն ու Դեմեթրիուս Դուգլասը:

Ջորջիան, այսպիսով, դարձել է ԱՄՆ 6-րդ նահանգը, որը նման բանաձև է ընդունել:

Հավայի նահանգի կողմից ԼԳՀ անկախությունը ճանաչող բանաձևի տեքստը 30.03.2016



Հրապարակվել է մարտի 29-ին ԱՄՆ Հավայի նահանգի Ներկայացուցիչների պալատի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հարգելու ու ճանաչելու մասին H.R. 167 բանաձևի հայերեն թարգմանությունը:

Ստորև ներկայացնում ենք բանաձևի տեքստը.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը էթնիկ հայկական տարածաշրջան է Հարավային Կովկասում, որն ունի երկար եւ հարուստ պատմություն, եւ իր նվիրական տեղն է զբաղեցնում հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի մեջ, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 1991 թ. դեկտեմբերի 10-ին՝ տասնամյակների պայքարից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի ճշգրիտ մեծամասնությունը քվեարկեց հոգուտ անկախության, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման տեսական պահանջը ոգեշնչեց տարածաշրջանում ապրող բազմաթիվ ժողովուրդների եւ

նախկին խորհրդային Միության փլուզման խթաններից մեկը հանդիսացավ, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդը վերջին երկու տասնամյակների ընթացքում հաստատակամություն եւ տոկունություն ցուցաբերեց պատերազմի, կոտորածների, տնտեսական զրկանքների եւ հսկայական այլ դժվարությունների պայմաններում, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ավելի քան քսան տարի հավատարիմ է իր քաղաքացիներին՝ պահպանելով իր անկախությունը եւ ջանքեր գործադրելով՝ փոփոխելու եւ կայունացնելու Կովկասյան տարածաշրջանը, եւ անցկացնելով ազատ ու անկախ ընտրություններ եւ հանրաքվեներ, որոնք համընդհանուր կերպով ճանաչվել են որպես օրինակ տարածաշրջանի համար, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ բազմաթիվ միջազգային դիտողներ, այդ թվում Միացյալ Նահանգներից, գնահատել են 2015 թ. մայիսի 3-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայացած խորհրդարանական ընտրությունները որպես ազատ եւ թափանցիկ, հետեւաբար

Հավայի նահանգի 28-րդ գումարման Ներկայացուցիչների պալատը 2016 թ. հերթական նստաշրջանին ՈՐՈՇՈՒՄ Է հարգել եւ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ նրա քաղաքացիներին, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ այս մարմինը ճանաչում է գոհողությունները եւ նվիրվածությունը եւ վճռականությունը, որոնք ցուցաբերվել են ԼԳՀ ժողովրդի կողմից ծայրահեղ դժվարությունների պայմաններում, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ այս մարմինը հղում է ԼԳՀ կառավարությանը եւ նրա ժողովրդին խաղաղության, բարգավաճման եւ շարունակական հաջողությունների իր լավագույն մաղթանքները, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ այս մարմինը կոչ է անում միջազգային հանրությանը՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան ժողովրդավարություն, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է որ սույն բանաձևի վավերացված պատճենները կփոխանցվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը նրա՝ Հավայիում գտնվող ներկայացուցիչների միջոցով, եւ լրացուցիչ վավերացված պատճենները կփոխանցվեն Միացյալ Նահանգների նախագահին, ԱՄՆ Սենատի մեծամասնության ղեկավարին, Ներկայացուցիչների պալատի խոսնակին, Միացյալ Նահանգների Կոնգրեսում Հավայի ներկայացուցիչներին:

Նշենք, որ Հավային դարձավ ԱՄՆ 7-րդ նահանգը, որը ճանաչեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը՝ միանալով Մասաչուսեթսի, Ռոդ Այլենդի, Լուիզիանայի, Քալիֆորնիայի, Մեյնի եւ Ջորջիայի նահանգներին:

Հավայի նահանգի կողմից ԼԳՀ ճանաչումը հաղթարշավի մի մասն է. ԼԳՀ նախագահի մամուլի քարտուղար

30.03.2016

Պաշտոնական Ստեփանակերտը երախտապարտ է ԱՄՆ Հավայի նահանգին՝ Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու համար: Այս մասին մեր թղթակցի

հետ զրույցում նշել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը:

Երբ Ձորջիա նահանգը ճանաչեց Արցախի անկախությունը, մենք ասացինք, որ տարբեր զարգացումներ են սպասվում: Հավայի նահանգի ճանաչումը հաղթարշավի մի մասն է, մենք կարելորում ենք սա: Այս նահանգի յուրահատկությունն այն է, որ ժամանակին եղել է թագավորություն, այսօր արդեն ԱՄՆ-ի մի մասն է կազմում: Շատ կարելոր է, որ երկրագնդի այս մասում էլ կա կարելոր մի կազմավորում, որը ճանաչել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը, -ասաց Դավիթ Բաբայանը: Նրա խոսքով, սա հաղթարշավի ընթացքն է, որն անխուսափելի է:



Նշենք, որ Հավայի նահանգը ԼՂՀ անկախությունը ճանաչել է մարտի 29-ին՝ համալրելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) անկախությունը ճանաչող եւ աջակցող Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Լուիզիանա, Մեյն, Կալիֆորնիա եւ Ձորջիա նահանգների շարքը:

Կոնգրեսականներ Դոլդն ու Փալոնը ԱՄՆ Կոնգրեսին կոչ են անում աջակցել ՀՀ-ին եւ ԼՂՀ-ին ֆինանսական օգնություն ցուցաբերելուն

03.03.2016



ԱՄՆ Կոնգրեսի Հայաստանի աջակցության խմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնը եւ Ռոբերտ Դոլդը նամակ են հղել ԱՄՆ Կոնգրեսի անդամներին՝ կոչ անելով միանալ իրենց՝ Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին 2017թ. ֆինանսական տարում ավելի շատ օգնություն ցուցաբերելու ջանքերին: Այս մասին հայտնում է ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը:

Նամակում նրանք առաջարկում են պաշտպանել հետեւյալ արտաքին օգնության գերակա ուղղությունները. Առնվազն 5 մլն դոլար հատկացնել 2016թ. ընթացքում Լեռնային Ղարաբաղում հումանիտար եւ կայուն զարգացման ծրագրերի համար Առնվազն 40 մլն դոլար հատկացնել 2017թ. Հայաստանի տնտեսական օգնության համար

Դադարեցնել ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին, քանի դեռ այդ երկրի կառավարությունը չի դադարեցրել սահմանային հարձակումները, վերջ չի տվել պատերազմը վերսկսելու սպառնալիքներ հնչեցնել եւ չի համաձայնել խաղաղ ճանապարհով լուծել տարածաշրջանային հակամարտությունները Վրաստանին հատկացվող օգնության առնվազն 10 տոկոսը տրամադրել Ջավախքի զարգացմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ներառել ԵԱՀԿ Մինսկի խմբի խաղաղ կարգավորման գործընթացում որպես բանակցային լիիրավ կողմ Հայ դատի հանձնախումբը տարվա սկզբին կոնգրեսականների հետ համանման խնդրանքով էր հանդես եկել եւ առցանց արշավ է գործարկել՝ Կոնգրեսի ներկայացուցիչներին կոչ անելով համատեղ ստորագրել Դոլդ-Փալոնի նամակը:

ԱՄՆ Կոնգրեսականները Օբամային կոչ են արել ճնշում գործադրել Ալիեւի վրա՝ ԼՂ խնդրի կարգավորման համար

03.03.2016



Ադրբեջանի նախագահ Բյիհամ Ալիեւի՝ մարտի վերջին Վաշինգթոն կատարվելիք այցի նախաշեմին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին գործերով հանձնաժողովի ղեկավարներ Էդ Ռոյսը եւ Բրեդ Շերմանը նախագահ Բարաք Օբամային կոչ են արել օգտագործել այդ հնարավորությունը Ադրբեջանի նախագահի վրա ճնշում գործադրելու համար, որպեսզի նա վերջ դնի Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար ներկայացված Ռոյս-Էնգելսի առաջարկների իրականացմանը խոչընդոտելուն:

Անցյալ տարվա դեկտեմբերին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 85 անդամների կողմից ստորագրված նախաձեռնության մեջ կա առանցքային կետ, որոնց նպատակը ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումն է: Այդ նախաձեռնությունը ստացել է Ռոյս-Էնգելսի առաջարկ անվանումը: Այն ներառում է հետեւյալ առանցքային կետերը.

Բոլոր կողմերից համաձայնություն ձեռք բերել շփման գծից դիպուկահարներին հետ քաշելու մասին Հատուկ սարքավորումներ տեղակայել սահմանային միջադեպերի հեղինակներին պարզելու համար ԵԱՀԿ դիտորդներ տեղակայել ավելի մեծ հսկողություն իրականացնելու համար:

ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը հայտնել է, որ իրենք միանում են Ռոյսի եւ Շերմանի՝ Օբամային ուղղված կոչին՝ ճնշում գործադրել Ադրբեջանի նախագահի վրա, որպեսզի Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման այս առաջարկներն ի կատար ածվեն:

Նշենք, որ ավելի վաղ Օբաման այս առաջարկին ի պատասխան՝ հայտնել էր, որ աջակցում է նախաձեռնությանը՝ ասելով. «Այդ միջոցները ձեռնարկելու հրատապությունը երբեք ավելի մեծ չի եղել»:

Շուտով Հայաստանի տարածքով փորձնական ռեժիմով Իրանից 2 կոնտեյներ բեռ կուղարկեն Եվրոպա

12.03.2016



Մոտ ժամանակներս Հայաստանի եւ Իրանի բեռնափոխադրողները փորձնական ռեժիմով Իրանից 2 կոնտեյներ բեռ կուղարկեն Եվրոպա: Այս մասին մեր թղթակցին հայտնել է ՀՀ տրանսպորտի եւ կապի փոխնախարար Արթուր Առաքելյանը:

Նա հիշեցրել է, որ այդ մասին համաձայնությունը ձեռք էր բերվել հունվարին՝ տարնապորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանի հետ Իրան կատարած աշխատանքային այցի շրջանակներում կայացած հանդիպման ժամանակ:

Այդ փորձնական առաքումից հետո իրանական եւ հայկական բիզնեսը կհասկանա, թե ինչ պայմաններում է հնարավոր Հայաստանի տարածքով ավելի արագ եւ շահավետ բեռներ փոխադրել Իրանից Եվրոպա:

Այս պահին հայաստանցի եւ իրանցի փոխադրողները եզրափակիչ կազմակերպչական փուլում են: Շուտով այդ 2 կոնտեյներները կճանապարհվեն,- ասել է Առաքելյանը:

Հիշեցնենք, որ տարանցիկ միջանցքի ամրապնդման համար Հայաստանում կառուցվում է Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին եւ պլանավորվում է Իրան-Հայաստան երկաթուղին:

«Նաիրիտ»-ի հարցով աշխատանքային խումբ է ձևավորվել

12.03.2016



Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Լեւոն Յոյանի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Նաիրիտ գործարանե ՓԲԸ առկա վիճակը եւ հետագա անելիքները ուսումնասիրելու համար: Այս մասին հայտնում են նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից:

Աշխատանքային խմբում ընդգրկված են ինչպես նախարարության, այնպես էլ գործարանի եւ Ներւան ՋԷԿ-ին ներկայացուցիչները: Աշխատանքային խումբը

գլխավորում է ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի տեղակալ Լ.Շահվերդյանը:

Նախարարի հանձնարարությամբ՝ ուսումնասիրելով Նաիրիտի ներկա վիճակը, աշխատանքային խումբը կարճ ժամանակահատվածում պետք է ներկայացնի առաջարկություններ՝ գործարանի հետագա զարգացման անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ:

ԱՄՆ կոնգրեսականը կոչ է արել ավելացնել Լեռնային Ղարաբաղին տրամադրվող օգնությունը



Ամերիկացի կոնգրեսական Բրեդ Շերմանը ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարցերով հանձնաժողովի լուսմների ընթացքում նշել է Լեռնային Ղարաբաղին տրամադրվող օգնությունն ավելացնելու անհրաժեշտությունը: Այս մասին հայտնում է Հայ դատի ամերիկյան գրասենյակը:

ԱՄՆ միջազգային զարգացման հարցերով գործակալության ադմինիստրատոր Գեյլ Սմիթի մասնակցությամբ նիստի ընթացքում Շերմանը նաեւ կոչ է արել ավելի ակտիվ ջանքեր գործադրել սիրիահայերի նկատմամբ ու հասցեագրված աջակցություն ցուցաբերել Ջավախքին: Գեյլ Սմիթը նշել է, որ USAID-ն աջակցում է այն եվրոպական երկրներին, որոնք փախստականների են ընդունում ու խոստացել է կոնգրեսականին տեղեկություն տրամադրել նաեւ Հայաստանում փախստականների հատկացվող օգնության մասին:

Հայ դատի ամերիկյան գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը շնորհակալություն է հայտնել կոնգրեսականին աջակցության համար՝ նշելով, որ նա շարունակում է բարձրացնել հարցեր, որոնք առաջնային են հայ համայնքի համար:

Times of Israel. Ժամանակն է, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը ճանաչեն Հայոց ցեղասպանությունը

6.03.2016

**THE TIMES
OF ISRAEL**

Ժամանակն է, որ ԱՄՆ-ը, խոշոր հրեական կազմակերպությունները եւ հենց Իսրայելը ճանաչեն 100 տարի առաջ Օսմանյան թուրքերի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը: Մուսուլման թուրքերն իրենք էլ

պետք է անեն նույն բանը: Այս մասին գրում է [Times of Israel](#) պարբերականի բլոգեր Ջոշուա Ռեզնեքը:

Յեղասպանությունը խլեց 1.5 մլն հայերի կյանք, որոնք կամ սովահար եղան կամ հալածանքների գոհ զնացին՝ ամբողջովին ջնջվելով երկրի երեսից, ինչպես նացիստները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ոչնչացրեցին Եվրոպայի հրեաներին,- գրում է հեղինակը: Բլոգերի կարծիքով հրեաները աշխարհում իրենց շատ հարմարավետ են զգում, այնինչ հայերը պետք է այդ ցուցակում առաջինը լինեն: Հայերը, հրեաների նման, աշխարհով մեկ տարածված սփյուռքում իրենց փոքրաքանակ թվով մեծ նվաճումներ են ունենում եւ հաջողությունների հասնում:

Անվիճելի, ապացուցված պատմական փաստ է, որ թուրք օսմանները հայ ժողովրդի դեմ ցեղասպանություն են իրականացրել: Ժամանակն է, վաղուց է հասունացել պահը, որպեսզի բոլոր ամերիկացիները, հրեաները եւ իսրայելցիները ճանաչեն դա,- նշում է Ռեզնեքը՝ թվարկելով ցեղասպանությունը չճանաչելու պատճառները: ԱՄՆ-ը հրաժարվում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը, քանի որ չի ուզում հիասթափեցնել ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային:

Ամերիկայի հրեական կազմակերպությունները ձեռնպահ են մնում ցեղասպանությունը ճանաչելուց քանի որ նմանատիպ պատճառներ ունեն:

Իսրայելցիները շարունակում են աջակցել թուրքերին, քանի որ Թուրքիան 1948թ. Իսրայել պետության օգտին է քվեարկել:

«Տասնամյակներ անց ժամանակն է առերեսվել աներկբա իրականության հետ, որ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի խաչն է, որը նա պետք է կրի», - եզրափակում է հեղինակը:

Եղվարդում հայտնաբերված մ. թ. ա 3-2-րդ հազարամյակի գտածոների լուսանկարները

22.03.2016



Մերն հաջողվել է ձեռք բերել Սյունիքի մարզի Եղվարդ գյուղի մոտ օրերս հայտնաբերված մ. թ. ա 2-3 հազարամյակի գտածոների լուսանկարները:

Հիեցնենք, որ մարտի 18-ին Կապանի երկու բնակիչներ Սյունիքի մարզի Եղվարդ գյուղի տարածքում հնագիտական իրեր են հայտնաբերել:

Նրանք հայտնաբերել են մասնավորապես, բրոնզեդարյան շրջանի մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակի, լուրիստանյան մշակույթի զարդեր պատմամշակութային առանձնակի արժեք ներկայացնող բրոնզյա զանգակներ, թասեր, ունեյի, բռնակներ, ծխական զարդանախշեր, սեպ, գուրգեր, դաշույն, դաշույնի պատյաններ, եռոտանի կախազարդեր, բազկակալներ, ապարանջաններ, զրահաբանկոնի դետալներ, կենդանիների երախակալներ եւ այլն, ընդհանուր թվով 191 նմուշ:

Երբ այս մասին հայտնի է դարձել տեղի ոստիկանությանը, քաղաքացիներին հրավիրել են բաժին: Նրանք

ոստիկանությանն են հանձնել իրերը՝ վստահեցնելով, որ իրենք են Եղվարդ գյուղի տարածքից քանդել ու հայտնաբերել իրերը:

Նշանակվել էր մշակութաբանական փորձաքննություն: Հանգամանքները պարզվում են: Նախապատրաստվում են նյութեր:



Արևմտյան Հայաստան

Անիի Տիգրան Հոնենց եկեղեցու ցուցանակին գրեք «Հայկական քրիստոնեական» ստորագրահավաք է սկսվել

03.03.2016



«Բանդակագործության ազգային պարկ» թանգարանը ստորագրահավաք է նախաձեռնել՝ պահանջելով գերծ մնալ Անիի Տիգրան Հոնենց եկեղեցու պատմական պատկանելիության շուրջ հայտարարություններից, ինչպես նաև եկեղեցու մոտակայքում տեղադրված ցուցանակում նշել Հայկական քրիստոնեական եկեղեցի անվանումը: Ստորագրահավաքն անցկացվում է [Change.org](#) կայքում:

Անցյալում լինելով պատմական հայկական մայրաքաղաք ու մի քանի ազգությունների բնակավայր՝ Անին մնում է հայկական, ինչն արձանագրված է պատմական տեղեկություններում, առկա վիմագրերում: Հայտարարելով Անին մշակութային բազմազանության պատմական տարածք՝ Թուրքիան շեղում է միջազգային հանրությանը բուն հայկական պահանջներից և դրանով իսկ ստեղծում պահանջի չեղարկման միջավայր:

Մակայն մեզ համար հատկապես մտահոգիչ է եկեղեցու վերակազմման ընթացքում այն քաղեկոնական հայտարարելը և դրանով իսկ վրաց-հայկական դարավոր բարեկամության մեջ վիճաբանությունների և մշակութային հակամարտության հրահրումը,- ասված է հայտարարության մեջ:

Ստորագրահավաքին արդեն 1300-ից ավելի մարդ է միացել:

Նշենք, որ Տիգրան Հոնենց եկեղեցին վերանորոգվել է:

Թուրքիայի հետախուզությունը հայ լինելը Էթնիկ պառակտչություն է համարում

04.03.2016

dönem içinde ivme kazanması beklenmekle birlikte yaklaşık 250 aday içerisinde ROJ TV'nin adaylık hakkını elde edemeyeceği düşünülmektedir.

2. DİĞER ETNİK BÖLÜCÜ FAALİYETLER

2.1. ERMENİLİK

Yurtiçi Önemli Gelişmeler

Agos Gazetesi önünde 19/01/2007'de uğradığı silahlı saldırıda hayatını kaybeden Agos Gazetesi Genel Yayın Yönetmeni Hrant DİNK'in, cinayet davasının, on yedinci duruşması, 28/03/2011'de, İstanbul 14. Ağır Ceza Mahkemesi'nde görülmüştür. Söz konusu duruşmada; "tutuklu sanıklar Erhan TUNCEL ve Yasin HAYAL'in tahliye olması halinde koruma tedbirlerinin yetersiz kalacağından hareketle tutukluluk, hallerinin devamına ve sonraki duruşmanın 30/05/2011'e ertelenmesine" karar verilmiştir.

Bu arada, Avrupa İnsan Hakları Mahkemesi (AİHM)'nin, 14/09/2010'da, Hrant DİNK'in yaşam hakkını ve ifade özgürlüğünü ihlal ettiği ve cinayetin ardından etkin soruşturma yürütmediği gerekçesiyle, Türkiye'yi mahkum

Հրանտ Դինքի սպանության գործով նոր մեղադրական գեկույցում հայտնվել է կից փաստաթուղթ, որում նշվել է, թե Թուրքիայի ազգային հետախուզության ծառայությունը Թուրքիայի հայ համայնքին հետևում է .էթնիկ պառակտչ գործունեությունն ենթավերնագրի տակ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական Ակոսե-ը, 2011 թվականի մարտի 1-ից 30-ը Թուրքիայի ազգային հետախուզության ծառայությունը (MIT) երկրի բոլոր ոստիկանական բաժանմունքներին ու հետախուզական վարչություններին հայերի, հույների, ասորիների ու մի շարք կազմակերպությունների հետ կապված աշխատանքային գրքույկ է ուղարկել: Հիշյալ գրքույկի մեջ .էթնիկ պառակտչ գործունեությունն ենթավերնագրի տակ տեղ է գտել Հայ լինելու բաժինը:

Հիշյալ գրքույկ-փաստաթուղթը կցվել է Հրանտ Դինքի սպանության գործով նոր մեղադրական գեկույցին:

Թուրքական դատարանը Պոլսո հայոց պատրիարքի ներկայացուցիչ է նշանակել

11.03.2016



Ստամբուլի վարչական գործերով 4-րդ դատարանի որոշումով Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Մուրաֆյանի ներկայացուցիչ է նշանակվել նրա մայրը՝ Մարի Մուրաֆյանը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական Ակոսե-ը, Ստամբուլի վարչական գործերով 4-րդ դատարանում Պոլսո հայոց հիվանդ պատրիարք Մեսրոպ Մուրաֆյանի համար ներկայացուցիչ նշանակելու պահանջով դատավարության ընթացքում պատրիարքական տեղապահ արք. Աթեշյանի փաստաթանը պահանջել է մերժել պահանջը:

Դատական նիստի վերջում դատարանը, ապացուցված համարելով, որ պատրիարքը հիվանդության պատճառով չի կարող պարտականությունները կատարել, որոշել է Հայոց պատրիարքի ներկայացուցիչ նշանակել պատրիարքի մորը՝ Մարի Մուրաֆյանին:

Թուրքիայում Պոլսո հայոց պատրիարքի հարցը շարունակում է մեծ խնդիր լինել ստամբուլահայ համայնքում: Ստամբուլահայերի մի մասը պնդում է, թե պետք է նոր պատրիարք ընտրել, քանի որ պատրիարք Մեսրոպ Մուրաֆյանը հիվանդության պատճառով չի իրականացնում պարտականությունները: Համայնքի մի մասն էլ կարծում է, թե պետության կողմից փոխպատրիարք նշանակված արք. Աթեշյանը պետք է իրականացնի պատրիարքի պարտականությունները:

Պոլսո հայոց պատրիարքարանի կանոնադրությամբ պատրիարքն ընտրվում է ցմահ:

Թուրքիայում հայ պատգամավորը կոչ է արել հարգել քրիստոնյաների իրավունքները

10.03.2016



Թուրքիայի քրդական Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը խորհրդարանում քննադատել է պետության կողմից միայն մուսուլմաններին մեծ աջակցություն ցուցաբերելը:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ Կարո Փայլանը խորհրդարանում հայտարարել է, թե Կրոնական գործերի վարչությունը ֆինանսավորում ու աջակցում է միայն մուսուլմաններին ու մահմեդականության հետ կապ ունեցող միջոցառումները: Թուրքիայի քրիստոնյաները եւս հարկեր են վճարում եւ պետությունը պետք է հավասարաչափ իրականացնի աջակցությունը: Եթե Էրդողանը հայտարարում է, թե հավատացյալ հասարակություն է ուզում, ապա ինչո՞ւ չի վերաբացում հունական կրոնական դպրոցը: Կա նաեւ Հայոց պատրիարքարանի հոգեւոր դպրոց, որը եւս փակ է, -ասել է Կարո Փայլանը:

Թուրքիայի խորհրդարանը հայ պատգամավորի աղոթքի համար ընդմիջել է աշխատանքները

12.03.2016



Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավոր Կարո Փայլանի պահանջով կիրակի տեղի ունեցած խորհրդարանական աշխատանքները ընդմիջվել են: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը նշել է, թե խորհրդարանում ուրբաթօրյա նամագի համար ընդմիջում է հայտարարվում եւ պահանջել իր համար էլ կիրակի եկեղեցի գնալու համար ընդմիջում հայտարարել: Խորհրդարանի նախագահը ընդունել է հայ պատգամավորի պահանջը եւ կիրակի խորհրդարանական աշխատանքները 40 րոպեով ընդմիջել է՝ հնարավորություն տալով հայ պատգամավորին եկեղեցի գնալ: Կարո Փայլանն իր հերթին օգտվել է ընդմիջումից եւ այցելել խորհրդարանին ամենամոտ եկեղեցին, աղոթել եւ վերադարձել խորհրդարան:

Թուրքիայի Կեսարիայում խոսում են գաղտնի հայերենով «Վարդանի լեզվով»

18.03.2016



Թուրքիայում կան թեմաներ, որոնց մասին ընդունված չէ բարձրաձայնել: Այդ թեմաներից են հայերի ու հայերենի հետ կապված բազմաթիվ հարցեր: NEWS.am-ն այս անգամ ներկայացնում է Կայսերիի (Կեսարիա) Էրբիլեթի թաղամասում օգտագործվող գաղտնի լեզվի՝ «Վարդաներենի» (Վարդանի լեզու) հետ կապված մանրամասներ: Ներկայում Կայսերիի Էրբիլեթում 50 տարեկանից մեծ տղամարդիկ խոսում են «Վարդաներեն» կոչվող լեզվով, որն

անհասկանալի է մյուս թուրքերի համար: Թուրքիայի գիտական շրջանակները համառոտ են չեն նշում .վարդաներենին հայերեն լինելը, իսկ «Վարդան» բառը նույնացնում են թուրքերեն «վաթան» բառի հետ՝ պնդելով, թե «վաթան» բառն են տեղացիները փոխել ու ասում .վարդանե: Սակայն տեղացիներն առանձին խոսակցություններում շեշտում են, որ իրենց իմացած .վարդաներենը հայերենն է, որն օգտագործել են մինչև Յեղասպանությունը այդ տարածքներում ապրած հայերը: Ներկայում Կայսերիի Էրբիլեթում «վարդաներենով» խոսում են առևտրականներն ու արհեստավորները, որպեսզի այդ պահին ներկա հաճախորդը չհասկանա իրենց խոսակցությունը:

«Վարդաներեն» լեզվում բացի գերակշիռ հայերեն բառերից կան նաև արաբերեն, թուրքերեն բառեր:

«Վարդաներենում» օգտագործվող որոշ հայերեն բառեր. Անգին (Կին), հավգիթ (ձու), բզդի (փոքրիկ, երեխա), ջուր, չամի (չամիչ), չիկա (չկա), գեշ (տգեղ), մածուն, սունուր (սուրճ), օսկի (ոսկի):

Արթուր Հակոբյան

Նոր զարգացում՝ Սասունի Գոմք վանքի առնչությամբ

22.03.2016



Բայթման նահանգի Սասուն գավառում գտնվող Գոմք պատմական վանքը եւ հայկական գերեզմանոցներն այլևս ենթակա են ոչ թե Չայրըրը, այլ՝ Մեշեյի գյուղին: Այդ մասին հաղորդում է Akunq.net-ը՝ հիմնվելով .Բայթմանե թերթում հրապարակված տեղեկատվության վրա:

Աղբյուրի համաձայն՝ 2007 թ. կադաստրային աշխատանքների ընթացքում Գոմք վանքի՝ Չայրըրի գյուղում գրանցվելու պատճառով տեղացի հայերի հարուցած դատական գործի քննությունն ավարտվել է: Ըստ կայացված դատավճռի՝ Գոմք վանքը եւ նրա շրջակայքում գտնվող հայկական գերեզմանները վերստին ընդգրկվել են Սասուն գավառի Մեշեյի (Գոմք) գյուղում:

Սույն դատական գործը հարուցվել էր 2007 թ., Սասունի, Մուշի, Բիթլիսի հայերի միության կողմից, որի նախագահ Ազիզ Դադըրը թերթի հետ գրույցում մասնավորապես նշել է. «Մեր կողմից եղած առարկության եւ տեղի ունեցած դատավարության արդյունքում Գոմք եկեղեցին եւ մեր մյուս պաշտամունքի վայրերն ընդգրկվել են Մեշեյի գյուղի կազմում: Արդեն իսկ դա էր ճիշտը:

Տեղի հայերը նաև ցանկանում են, որ սույն պատմական վանքում, թեկուզ եւ խորհրդանշական կերպով, գեթ մեկ անգամ պատարագ մատուցվի:

Թուրքիայում պետականացրել են Դիարբեքրի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին

29.03.2016



Թուրքիայի քրդաբնակ Դիարբեքր նահանգի Սուրբ շրջանում գտնվող հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին նախարարների խորհրդի որոշումով պետականացվել է: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական Ակոսե-ը, թեև Դիարբեքրի Սուրբ շրջանում դեռևս շարունակվում է փողոց դուրս գալու արգելքը, Թուրքիայի նախարարների խորհուրդը շտապ կարգով Սուրբ շրջանում գտնվող շինությունները պետականացնելու որոշում է կայացրել: Աբսուրդն այն է, որ պետականացված շինությունների շարքում է հայտնվել վերջին տարիներին հայերի հանգանակությամբ վերանորոգված ու վերաբացված Սուրբ Կիրակոս եկեղեցին, հայկական կաթոլիկ եկեղեցին, Սուրբ Սարգիս եկեղեցին, ասորական սուրբ Աստվածածին եկեղեցին:

Խնդրի հետ կապված Դիարբեքրի քաղաքապետարանի մշակույթային ժառանգության վարչության պետը նշել է, որ կառավարությունը պետականացրել է ինչպես հայկական ու այլ ազգային փոքրամասնություններին պատկանող գույքը, այնպես էլ Դիարբեքրի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող շինություններ:

Նա պնդել է, թե այս անօրինական որոշման դեմ հայերը պետք է դատական հայցեր ներկայացնեն:

Նշենք, որ Մերձավոր Արևելքի ամենամեծ եկեղեցիներից մեկի՝ Սուրբ Կիրակոսի վերաբացումն ու օծումը տեղի է ունեցել 2011- հոկտեմբերի 22-ին, իսկ առաջին պատարագը մեկ օր անց՝ հոկտեմբերի 23-ին:

Սուրբ Կիրակոսի վերանորոգումը իրականացվել է դիարբեքրիցի հայերի եւ Դիարբեքրի քաղաքապետարանի աջակցությամբ:

Սուրբ Կիրակոսը վերաբացվել է որպես գործող եկեղեցի:

Սփյուռք

Շառլ Ազնավուրը եւ Մադրիդի Ռեալիե ֆուտբոլիստները սատարում են գյումրեցի 13 անօթեւան ընտանիքներին

03.03.2016

Ֆրանսահայ աշխարհահռչակ շանտոնիե Շառլ Ազնավուրը արձագանքել է գյումրեցի անօթեւան ընտանիքներին օգնելու եւ նրանց համար բնակարաններ գնելու՝ SOS

հաղորդաշարի ռեժիսոր Հայկ Բարսեղյանի դրամահավաքի նախաձեռնությամբ:



Շառլ Ազնավուրի ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել է 13 անօթեւան ընտանիքների մասին պատմող Հայկ Բարսեղյանի տեսանյութը՝ Գյումրու աղետալի երկրաշարժի մասին պատմող նկարագրությամբ: Սարսափելի երկրաշարժը 25.000 մարդու կյանք է խլել, հազարավոր ընտանիքներ մնացել են անօթեւան եւ ապրում են առանց հույսի: Սա մի ծրագիր է, որը նպատակ ունի օգնել վտանգավոր պայմաններում ապրող գյումրեցի անօթեւաններին,-նշվում է հրապարակման նկարագրության մեջ:

Մեր հետ գրույցում Գյումրիի ժուռնալիստների Ասպարեզե ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը նշեց, որ Շառլ Ազնավուրը դրամական աջակցություն չի ցուցաբերել գյումրեցի անօթեւաններին, աջակցությունը եղել է դրամահավաքի մասին պատմող հրապարակման վերահրապարակումը:

Նրա խոսքով՝ դրամահավաքի նախաձեռնողները կապ են հաստատել նաեւ Մադրիդի Ռեալիե հետ: Նախնական համաձայնությամբ՝ թիմի առաջատարները ուղարկելու են իրենց մարզաշապիկները ստորագրություններով եւ գրությամբ՝ ի աջակցություն Գյումրու անօթեւանների: Մարզաշապիկը վաճառքի է հանվելու մարտի 19-ին կայանալիք բարեգործական աճուրդում:

Նշենք, որ աճուրդի համար ունենք Բարսեղյանե-ի դորշը՝ Լիոնել Մեսսիի, Չավիի, Ինյեստայի, Տիերի Անրիի ու թիմի 10 աստղերի ստորագրությամբ:

Աշխարհահռչակ ռոք երաժիշտ Սերժ Թանկյանը եւս միացել է Գյումրիի անօթեւան 13 ընտանիքի համար բնակարան գնելու նպատակով մեկնարկած դրամահավաքին:

Գյումրեցի հռչակավոր ջազ դաշնակահար Տիգրան Համայանը անօթեւաններին աջակցելու նպատակով Գյումրիի տնակային ավաններից մեկում փետրվարի 28-ին բարեգործական համերգ ունեցավ:

Նշենք, որ նախագծի նախաձեռնողը լուսանկարիչ Հայկ Բարսեղյանն է, որը Գյումրիի անօթեւան 13 ընտանիքի համար բնակարան գնելու համար դրամահավաք է կազմակերպել բրիտանական Crowdfunder կայքում:

Գյումրեցի 13 անօթեւան ընտանիքի համար կազմակերպված դրամահավաքն ավարտվում է մարտի 20-ին, եւ եթե մինչ այդ չհավաքվի սահմանված գումարը, ապա մինչ այս կայքին նվիրաբերված գումարները օգտատերերին հետ կվերադարձվեն. կայքի պայմաններն են այդպիսին: Նվիրատվությունների 80 տոկոսը դրսից է: Արդեն մեկ ընտանիքի բնակարանի գումար հավաքվել է: Գյումրիում մեկ սենյականոց բնակարանն արժե մոտ 10 հազար դոլարե,-նշել է Հայկ Բարսեղյանը:

ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԳԱՀ Է ԸՆՏՐՈՒՄԸ ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆԸ



2016թ. մարտի 6-ին Չինաստանի հայկական համայնքում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնց արդյունքում Մհեր Սահակյանն ընտրվեց համայնքի նախագահ: Նա գիտական հետազոտություն է կատարում Նանջինգի համալսարանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտում:

Մ.Սահակյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության բաժնի շրջանավարտ է: Գերազանցության դիպլոմով ավարտել է ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի մագիստրատուրան: Սովորել է ԱԳՆ դիվանագիտական դպրոցում, Իրանի իմամ Խոմեյնու անվ. համալսարանում, Ռուսաստանի քաղաքական հետազոտությունների կենտրոնում: Ծառայել է ՀՀ Չինված ուժերի հատուկ նշանակության զինում, պարզևատրվել է Քանասի գերազանցիկ, Քաջարի մարտիկ կրծքանշաններով, պատվոգրով: Հիմնադրել է Չինաստանի հայկական ուսանողական միությունը, մինչև 2016թ. զբաղեցրել է Չինաստանի հայկական համայնքի արտաքին կապերի գծով փոխնախագահի պաշտոնը: 2015թ. ապրիլին Նանջինգում դեկավարել է Ցեղասպանության հիշատակմանը նվիրված միջոցառումների կազմակերպական կոմիտեն: Միջազգային հարաբերությունների և արևելագիտության վերաբերյալ գիտական և վերլուծական հոդվածների հեղինակ է:

Իր խոսքում Մհեր Սահակյանը կոչ է արել Չինաստանի հայկական համայնքին շարունակել ամրապնդել համայնքի միասնականությունը, հանդես գալ նախաձեռնություններով, ակտիվորեն մասնակցել համայնքի կյանքին, օգնել միմյանց, պահպանել հայոց լեզուն և ազգային գաղափարները:

Մհեր Սահակյանը շնորհակալություն է հայտնել համայնքի առաջին նախագահ Հենրի Արսլանյանին՝ նշելով. «Հենրի Արսլանյանն անմնացորդ նվիրվածությամբ է կատարել իր ազգանվեր առաքելությունը: Նա հիմնադրեց համայնքի Գործադիր կոմիտեն, և առաջինն էր, ով արձագանքում էր համայնքի առջև ծառացած մարտահրավերներին: Չինաստանի հայկական համայնքում Հենրին ձևավորեց ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտը, որը պետք է պահպանել»:

Չինաստանի հայկական համայնքն ակտիվ գործունեություն է ծավալում: Հատկանշական են երկրում բնակվող հայերին միավորելը, Հեռավոր Արևելքում հայապահպանությանը նպաստելը, չինացի ուսանողներին Հայաստանում սովորելու համար կրթաթոշակի հատկացումը, Չինաստանում հայկական ներկայության պատմության վերաբերյալ Գյուլբենկյանե հիմնադրամի հետ կատարվող ուսումնասիրությունները, Չինաստանում

Հայկական ուսանողական միության գործունեությունը, Հայ հետազոտողների և ուսանողների առցանց գիտաժողովը և այլն:

Չինաստանի հայկական համայնքով հետաքրքրվողները կարող են այցելել <http://www.chinahay.com/> Հետադարձ կապ՝ contact@chinahay.com

Թուրքիայի մեջլիսում հայ պատգամավորը ձու է «կովացրել» (ֆոտո)

24.03.2016



Թուրքիայի ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական (CHP) կուսակցության պատգամավոր Սելինա Դոդանը Սուրբ Չատիկի հետ կապված խորհրդարանի լրագրողներին ներկա ձվեր ու Չատիկի թխվածք է հյուրասիրել:

Թուրքական Sondakika կայքի փոխանցմամբ՝ CHP-ի հայ պատգամավոր Սելինա Դոդանը խորհրդարանում լրագրողների հետ գրույցում նշել է, որ քրիստոնյաները մարտի 27-ին նշելու Սուրբ Հարության տոնը, որի ուրախությունը ցանկանում է կիսել լրագրողների ու մյուս պատգամավորների հետ:

Խոսքի վերջում Սելինա Դոդանը ներկա ձվեր ու Չատիկի թխվածք է հյուրասիրել լրագրողներին եւ ձու .կովացրել էր գործընկերներից մեկի հետ:

Միջազգային

Թուրքիայում քրդերն ու ձախերը զինված նոր շարժում են ստեղծել

13.03.2016



Թուրքիայում արգելված ձախակողմյան կուսակցությունները մարտի 12-ին քրդական PKK-ի (Քուրդիստանի բանվորական կուսակցություն) հետ համատեղ զինաձուլ շարժում են ստեղծել:

Քրդական Firat գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի ձախակողմյան ու քրդական Բուրդիստանի

բանվորական կուսակցության հետ համատեղ կազմակերպված ասուլիսում հայտարարել են համատեղ նոր շարժման մասին:

Հավաքված կուսակցությունների ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենց նոր շարժման անունն է Ժողովուրդների միացյալ հեղափոխական շարժումն, որը պայքարելու է Արդարություն եւ զարգացումն կուսակցության ֆաշիզմի դեմ:

Արա Պապյան. Զրդական պետության ձեւավորումն անխուսափելի է



Զրդերը պարտադիր կմասնակցեն Ժնևում միջսիրիական բանակցություններին: Այս մասին մարտի 14-ին կայացած մամուլի ասուլիսին ասել է Մոդուս Վիլենդին վերլուծական կենտրոնի ղեկավար Արա Պապյանը:

Նրա խոսքով՝ քրդական պետության ձեւավորումն անխուսափելի է:

Հիշեցնենք, որ Սիրիայի հարցով խաղաղ բանակցությունների հեղթական փուլը պետք է սկսվի մարտի 14-ին Ժնևում: Դրան մի կողմից մասնակցելու է Սիրիայի ընդդիմության բանակցությունների Գերագույն հանձնաժողովը, որի կազմում կլինեն քրդերի ներկայացուցիչներ, իսկ մյուս կողմից՝ Սիրիայի կառավարության պատվիրակությունը: Բանակցությունները լինելու են միջնորդավորված: Կողմերի միջև միջնորդ է լինելու ՄԱԿ՝ Սիրիայի հարցերով հատուկ բանագնաց Ստեֆան դե Միստուրան:

Թուրքիայում Գալիպոլիի միջոցառումներն այս տարի ապրիլի 24-ին չեն լինելու

12.03.2016



Թուրքական իշխանություններն այս տարի որոշել են Գալիպոլիի ճակատամարտին նվիրված միջոցառումներն իրականացնել մարտի 18-ին:


Թուրքական Anadolu գործակալությունը հայտնել է, որ Գալիպոլիի ճակատամարտին նվիրված 2 միջոցառումներ են տեղի ունենալու մարտի 18-ին:

Նշենք, որ 2015-ին թուրքական իշխանությունները Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները

ստվերելու համար Գալիպոլիի ճակատամարտի միջոցառումներն իրականացրել էին ապրիլի 24-ին:

Կորեայի խորհրդարանի ներկայացուցիչ. Ղարաբաղյան համակարտությունը պետք է կարգավորվի ժողովուրդների ինքնորոշման սկզբունքով

12.03.2016



Ղարաբաղյան հակամարտության լուծման հիմքում պետք է դրվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այդ մասին ասել է Կորեայի Հանրապետության Ազգային ժողովի Կորեա-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար Յունգ-մին Նոն Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության անդամների հետ հանդիպմանը:

Պատվիրակության ղեկավար Սամվել Փարմանյանը շնորհակալություն է հայտնել Յունգ-մին Նոնին՝ Կորեայի Հանրապետություն այցի հրավերի համար եւ հույս է հայտնել, որ հայ-կորեական հարաբերությունները կշարունակեն զարգանալ խորհրդարանների միջև սերտ համագործակցության արդյունքում: Իր խոսքում Սամվել Փարմանյանը բարձր է գնահատել Յունգ-մին Նոի ջանքերը՝ ուղղված հայ-կորեական միջխորհրդարանական համագործակցության ակտիվացմանը:

Հանդիպմանն անդրադարձ է եղել Հայոց ցեղասպանության խնդրին: Հայկական պատվիրակության անդամները կարեւորել են պարոն Նոի ջանքերը՝ ուղղված Հայոց ցեղասպանության խնդրի բարձրաձայնմանը՝ վկայակոչելով նրա հեղինակած Ժամանակակից ողբերգությունն գիրքը, որի առաջին գլխում անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության խնդրին: Հանդիպման ընթացքում Սամվել Փարմանյանը պարոն Նոին փոխանցել է ապրիլ ամսին Երեւանում կայանալիք Ընդդեմ ցեղասպանության հանցագործության երկրորդ գլոբալ ֆորումին մասնակցության հրավերը:

Սամվել Փարմանյանը նշել է, որ Հայաստանում մեծ հետաքրքրություն կա կորեական մշակույթի եւ լեզվի նկատմամբ, ինչի վկայությունն է նաեւ Երեւանի Բրյուսովի անվան պետական լեզվափոխարկագիտական համալսարանում կորեերեն լեզվի կենտրոնի գործունեությունը:

Կողմերն անդրադարձել են նաեւ երկկողմ առեւտրատնտեսական, մշակութային կապերի ընդլայնման անհրաժեշտությանը: Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել Կորեական թերակղզում տիրող իրավիճակի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության, ինչպես նաեւ միջազգային այլ հիմնական խնդիրների շուրջ: Կորեա-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի ղեկավարը նշել է, որ Ղարաբաղյան հակամարտության լուծման հիմքում պետք է դրվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը:

Մշակութային

ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄԵԱՆԻ «ՈՒԽՏԵԱԼՆԵՐԸ» ՎԷՊԸ (Երևան, 2015)

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
Երևան, 15 Մարտի, 2016թ.

Երբ Սփիւռքի հեռաւոր հայագաղութներուն մէջ մեր երրորդ և չորրորդ սերունդի գաւակները ցեղասպանութենէն ետք մոռանալ սկսած են Եղեւսիան կամ Ուրֆան, քաղաք ուր ծնած ու ապրած են այդ սերունդներուն պապիկներն ու մամիկները, այստեղ, Հայաստանի մէջ նոյն սերունդներու գաւակներէն մէկը՝ Հովիկ Վարդումեանը, վէպ մը գրած է .Ուխտեալները վերնագիրին տակ:

Սիրտի ցաւով կարճանագրեմ վերի եղելութեան առաջին մասը երբ Բեգինի մէկ ճաշարանին մէջ հանդիպեցայ Պէյրութ և Պաղատա ծնած զոյգի մը ու հարց տուի թէ իրենք որտեղացի են, երկուքն ալ ըսին թէ ուրֆացի են: Բայց կանգիտանային Ուրֆային Եղեւսիա ըլլալը և գաղափար իսկ չունէին այս կռուիլ գիտցող հայաքաղաքի հերոսներուն անունները:– Մկրտիչ Եւթնաղբարեան, Յարութիւն Ռասթիլէնեան, Մարօ և այնքան ուրիշներ:

Քիչ մը կոպիտ եղաւ բայց ըսի անոնց:– Ձեր անունները ջնջեցի Ուրֆացիութեան տետրակէն: Իսկ երբ սեղանին մօտեցող երիտասարդուհիին ով ըլլալը հարցուցի, ըսին:– մեր աղջիկն է, Բեգինի մէկ համալսարանին մէջ չինացիներու անգլերէն կը սորվեցնէ... առանց գիտնալու թէ ինք ուրտեղէն կուգայ...

Բայց ահա երևանաբնակ Հովիկ Վարդումեանը իր վէպին մէջ քար առ քար, փողոց առ փողոց անուանումներով գիտէ հերոսական այս քաղաքին ոչ միայն բոլոր փողոցները, այլ բոլոր հերոսներուն ընտանեկան պատմութիւնը:

Կարծէք Հովիկը հոն ծնած ըլլար և ուխտեալներու խումբի հետ ինքն ի ձեռն Եղեւսաղբարեաններու և Ռասթիլէնեաններու կողքին մասնակցած ըլլար այդ պայքարին:

Այս վէպը տպուած է պետական աջակցութեամբ, որուն առաջին էջին վրայ կը կարդանք:– Ես փստահ եմ, որ օր մը թիւրքը պիտի կործանուի իր անասելի ոճիրներու բեռան տակէ

Գարեգին Քահանայ Ոսկենիչեան

1915 թ.ի նահատակ

«Ինչ կը լինէր մեր վիճակը, եթէ այս ծանր օրերին մի քանի ուրֆաներ մեր դէմ այսպէս ծառանային»:

Ֆախրի փաշա

Այսպէս էր մարտնչող ուրֆացիին իր հաւատքով և թշնամին անգամ կը խոստումներ թէ հայը ինչպէս իջած էր պայքարի դաշտ:

Իսկ 1895 թ.ի Ուրֆայի դէպքերու հերոսներէն յեղափոխական գործիչ Վահան Քեհեւեանը 11 օգոստոս 1915 թ.ին ստորագրած է հետևեալ տողերը որպէս այս վէպի յառաջաբան:– Վաղը առաւօտ կը մնկնինք Այաշ, ակայն գիտեմ, որ տեղ պիտի չհասնինք: Վաղը այս ժամուն արդէն ամեն ինչ վերջացած պիտի ըլլայ: Իմ կեանքիս վրայ չէ որ կափառսամ, մահուան մասին չէ որ կը մտածեմ, 19 տարի առաջ պիտի կտրուէր թելը, ինչ որ

ապրած եմ շահ մըն է արդէն: Ինչ որ ցաւ կը պատճառէ ինծի և մեր ձերբակալութենէն ի վեր կը ճնշէ հոգիիս վրայ, այդ ալ ամբողջ ժողովուրդով խաբուած ըլլալուս իրողութիւնն է: Ճակատագրին չեմ հաւատար, մարդիկ իրենք է որ կը կերտեն իրենց ճակատագիրը, ազգերը՝ առաւելապէս:

Այսպիսին էր Այաշ մահուան մեկնող ուրֆացի հայուն իրա՛ւ ապրումը խաբուած ըլլալու, ազգովին խաբուած ըլլալու ծանրակշիռ իրողութիւնը, որ... շարունակուեցաւ դար մը ևս ու տեղ-տեղ մինչև այսօր...

Վէպը մտաւ իր հունին մէջ: Հեղինակին լեզուն պարզ է, հեռու պոռոտախօսութենէ: Վէպին մուտքը՝ տեղանքի բացատրութիւն՝ բանաստեղծական: Դէպքերու շարադրանքը՝ հեռու բանաստեղծական ըլլալէ: Լայն տեղեկութիւններ Ուրֆայի հայութեան նիստ ու կացին, սովորութիւններուն, խրախճանքներուն, հաւատալիքներուն շուրջ նաև պաշտամունքներու մասին, ուր, ինչու չէ, կայ նաև երգ ու պար, խրախճանք:

Բայց... «Քսաներորդ դարն սկսում էր մարդկութեան համար անցանկալի մակընթացութիւններով ու տեղատուութիւններով: Կենտրոնից աշխարհը կառավարողները մեծ ու փոքր տէրութիւններին հանում էին միմիանց դէմ, քանզի տնական խաղաղութիւնը խանգարում էր նրանց ծրագրերի իրականացմանը»:

Հոս եղբայրութեան տօնախմբութիւն՝ ինկած է կարմիր Սուլթանը՝ խրախճանք, հաւասարութիւն, համբույրներ:– «Ուրֆա քաղաքի կենտրոնական հրապարակը վաղուց այդքան մարդաշատ ու խայտաբղետ չէր եղել»:

Տագնապի զգացողութիւն:– «Տիգրանն արթնացաւ: Ողորուել էր քրտինքի մէջ, մոծաւանջային երազը շարունակում էր: Անհասկնալի տագնապը...»:

Այս մէկը երազ մըն էր, որ շուտով իրողութիւն պիտի դառնար Չօհրային պատմութեամբը, երբ Թալեաթի հրաւերով մեր յայտնի գրողն ու երեսփոխանը նարտի կը խաղայ:– Թալեաթը:– Դուշէշ... այսօր ես քեզ կը յաղթեմ Չօհրայէ Էֆէնտի... կը յաղթեմ... ես արդէն յաղթել եմ քեզ...

Չօհրայը խաղընկերոջ վերջին խօսքերի մէջ չարութիւն զգաց:

Չօհրայը պարտուում էր:

– Չառ է,– քմծիծաղեց Թալեաթը,–երբեք չես կարող գուշակել թէ որ կողմի վրայ կը պառչի: Կեանքն էլ է այդպէս:

Խաղընկերոջ երկիմաստ արտահայտութիւնն էլ աւելի ընկնեց Չօհրային: Լռութեամբ ոտքի ելաւ ու հրաժէշտ տուեց:

– Գնաւ բարով, յաջորդ անգամ գուցէ բախտդ բերի:– Թալեաթը բռնեց Չօհրայի ձեռքը և ամուր ու երկար սեղմեց: Դա մտքում հրաժէշտ էր տալիս իր անփոխարինելի ընկերոջը:

«Առակե մը ևս:– Մակայն Յունիսի վերջին արդէն՝ շրջագայող յուրերը դարձան դաժան իրականութիւն: Ուրֆա քաղաքը վերածուեց դէպի Սիրիայի անապատները բշուող հայ գաղթականների քարաւանների կայանքը»:

Կանցնին զէյթունցիներ և ուրիշներ յաջորդաբար: Ուրֆայի հայերը այս բոլորին ականատես, տակաւին արթնցած չեն: Կօզնեն գաղթականներուն, առանց կասկածելու, որ կարգը իրենց ևս պիտի գայ:

Բայց գաղթականներու սովալլուկ վիճակը կարթնցնէ զիրենք վերջապէս:

«Մկրտիչը քախօս էր: Բայց խօսեց կամաց, որ հարևան սենեակում քնածները չսեն...

– Մեր ողջ ազգն է բնաջնջման վտանգի մեջ, Եղիաբեթ: Եթե իուրաքանչիւրս մտածենք մեր անձի ապահովութեան մասին, բոլորս կը կոտորուենք»:

Այս եզրակացութեան կը մղէ Մկրտիչը, որ խումբ մը ընկերներով խիստ գաղտնապահ, սկսին զինուի, Հալեպէն իսկ զենք փոխադրելով մինչև Ուրֆա:

Ժողովուրդը կռուելու պատրաստ չէ: Զինուելու կարգին պէտք է զանգուածը զինել կռուելու վճռականութեամբ: Հասնիլ այս բոլորին: Աշխատանքը բաւարար չէ, կրօնական առաջնորդներու մեծերը կուզեն կաշառել թուրք երեւելիները, որպէսզի... ազատուին ճնշումներէ: Տակաւին չեն ճանչցած թիւրքը...–

– «Այդ խառնակ օրերին Ուրֆա բերեցին օսմ. Մէջիսի հայ երեսփոխաններ Զօհրապին և Վարդգէսին: Ուրֆայի թիւրք երեսփոխանը նրանց ծանօթ էր Պոլսից. Մի քանի օր պահեց իր տանը, հիւրասիրութիւն կազմակերպեց: Այս ալ ուրիշ խաղ, երբ Մկրտիչը ծրագիր մշակեց զիրենք ազատելու համար: Նոյնը առաջարկած էին Հալեպի հայերը: Մեր այս երկու պատասխանատու մեծերը կը մերժեն նրա առաջարկը... զարմանք պատճառելով բոլորին: Ինչո՞ւ կը մերժեն... Եթէ մենք փախչինք, ժողովրդի վիճակն աւելի կը ծանրացնենք...»:

Ծանրացնելու հարց կա՞, երբ տասնեակ հազար գաղթականներ Ուրֆայէն անցած են ու կը շարունակեն անցնիլ...

– Հը՞... հարցրեց Աստուրիկը:

Մկրտիչի տրամադրութիւնն ընկել էր, չէր ցանկանում խօսել:

– «Սրանք էլ մերոնց խելքին են,– ասաց ու լռեց»:

